14.10.2015 թ.

SCHOOL-2015-N4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՄԱՏՐԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է սովորողների համար նախատեսված ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը՝ ըստ բաղադրիչների, թեմատիկ ոլորտների և տարիքային խմբերի:

Փաստաթուղթը նախատեսված է դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆինանսական կրթություն իրականացնող բոլոր շահառու կողմերի համար:

Հարցերի դեպքում կարող եք դիմել Արաքս Մանուչարյանին.

- Էլ. հասցե՝ araks.manucharyan@cba.am
- Հեռ.՝ (010) 592 715

Թեմատիկ ոլորտներ	Բաղ.	< 10 տ. (մինչև 4-րդ դաս.)	11-12 տ. (5-6-րդ դաս.)	13-15 տ. (7-9-րդ դաս.)	16-18 տ. (10-12-րդ դաս.)
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	*Գիտելիք*	✓ Իմանա, թե ինչ է փողը և ինչպես է այն առաջացել: ✓ Իմանա, որ փողն օգտագործվում է ապրանքներ և ծառայություններ գնելու համար: ✓ Իմանա, որ Դրամը ՀՀ-ի պաշտոնական փողն է և ամեն երկիր ունի իր պաշտոնական արժույթը:	✓ Իմանա, թե որոնք են փողի գործառույթները: ✓ Իմանա, թե ինչպիսի վճարման ձևեր գոյություն ունեն: ✓ Իմանա, որ յուրաքանչյուր արժույթ ունի փոխարժեք:	✓ Իմանա, թե ինչ է գնաճը և որոնք են դրա դրական և բացասական կողմերը: ✓ Հասկանա, որ գնաճը բնականոն երևույթ է: ✓ Իմանա, թե ինչպիսի ֆինանսական կազմակերպություններ գոյություն ունեն և որն է դրանց դերը: ✓ Իմանա, թե ինչպիսի հիմնական ֆինանսական ծառայություններ գոյություն ունեն:	✓ Իմանա, թե որն է ՀՀ Կենտրոնական Բանկի դերը ֆինանսական համակարգում, նրա խնդիրները և իրավասությունները: ✓ Իմանա, թե ինչ է դրամավարկային քաղաքականությունը և ինչպես է այն իրականացվում: ✓ Իմանա, թե ինչպես է ձևավորվում պետական բյուջեն և իրականացվում հարկաբյուջետային քաղաքականություն: ✓ Իմանա ֆինանսական ծառայություններից օգտվելու դեպքում ընձեռնվող հնարավորությունները, առավելությունները և հնարավոր ռիսկերը:
	Հմտություն	✓ Կարողանա ճանաչել և տարբերակել դրամները՝ ըստ իրենց արժեքների: ✓ Տարբերակի թղթադրամը և մետաղադրամը:	✓ Կարողանա տարբերել տարբեր արժույթները և մեկնաբանել դրանց փոխարժեքները: ✓ Կարողանա հաշվարկել արտարժույթի փոխարժեքի տարբերությունները:	✓ Կարողանա ըմբռնել գնաճի ազդեցությունն իր կենսամակարդակի վրա: ✓ Կարողանա տարանջատել, թե որ ֆինանսական կազմակերպությունը ինչպիսի ծառայություններ է մատուցում: ✓ Կարողանա հաշվարկել արտարժույթի	✓ Կարողանա գնահատել, թե ինչպես կփոխվի վարկի տոկոսադրույքը վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության դեպքում:: ✓ Կարողանա ըմբռնել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությունները:

				փոխարժեքի փոփոխության ազդեցությունը իր ֆինանսական գործարքների վրա:	✓ Կարողանա տարբերել վստահելի ֆինանսական կազմակերպությունները ոչ վստահելիներից:
	Վերաբեր.	✓ Կարևորի փողի՝ արժեք ունենալու հատկությունը:	✓ Կարևորի փոխարժեքի դերը անձնական և ընտանեկան փողերի կառավարման գործում:	✓ Կարևորի գնաճի դերը անձնական փողերի կառավարման գործում: ✓ Կարևորի ֆինանսական համակարգում ներգրավված լինելը:	✓ Վստահի ֆինանսական համակարգին և գործող վստահելի կազմակերպություններին:
	Վարքագիծ		✓ Ըստ անհրաժեշտության հետևի փոխարժեքի ցուցանիշներին:	✓ Հաշվի առնի գնաճը անձնական ֆինանսների կառավարման ընթացքում:	✓ Օգտվի ֆորմալ ֆինանսական ծառայություններից:
ԲՅՈՒՋԵ	*Գիտելիք*	✓ Պատկերացնի «սպառե՞լ, թե՞ խնայել» գաղափարը: ✓ Հասկանա, թե ինչ է նշանակում «ծախսել»: ✓ Հասկանա, թե ինչի վրա կարելի է ծախսել (օրինակ՝ սնունդ, հագուստ և այլն): ✓ Հասկանա, թե ինչ է եկամուտը: ✓ Հասկանա, որ կան եկամտի տարբեր աղբյուրներ (օրինակ՝ աշխատանք):	✓ Իմանա, թե ինչ է անձնական և ընտանեկան բյուջեն: ✓ Իմանա, թե ինչ հիմնական եկամուտների աղբյուրներ գոյություն ունեն (ներառյալ գործարարությունը): ✓ Իմանա, թե ինչ հիմնական ծախսերի տեսակներ գոյություն ունեն: ✓ Հասկանա ծախսերի տեսակները:	✓ Իմանա, որ որոշակի գործոններ կարող են ազդել եկամուտների մակարդակի վրա և, որ եկամուտներից կարող են օրենքով գանձումներ կատարվել (եկամտային հարկ, սոց. վճար և այլն): ✓ Իմանա, որ գոյություն ունեն փողի մուտքեր կամ ելքեր, որոնք կարող են եկամուտ կամ ծախս չլինել: ✓ Իմանա իր դրամը մյուսների հետ «կիսելու» կարևորությունը (օր.՝ crowdfunding, կամավորություն, բարեգործություն): ✓ Իմանա «Հասույթ», «Շահույթ», «Ինքնարժեք»	✓ Իմանա բանկային հաշվի և վճարային քարտերի տեսակները: ✓ Իմանա բանկային հաշվի և վճարային քարտերի օգուտները և հնարավոր ռիսկերը: ✓ Իմանա, իր անձնական ֆինանսների վրա ազդող հնարավոր ռիսկերը (օրինակ՝ գնաճ, փոխարժեք, դժբախտ պատահարներ, ֆորս մաժոր և այլն): ✓ Իմանա, թե ինչպիսի ֆինանսական ծառայություններ կան, որոնք կարող են օգտակար լինել ռիսկերի կառավարման համար (օրինակ՝

				և «Եկամտաբերություն» հասկացությունները: ✓ Իմանա, թե բյուջեի վերահսկողության ինչպիսի մոտեցումներ կան (օրինակ՝ գրառումների կատարում, չեկերի և կտրոնների պահպանում, քաղվածքներ և այլն): ✓ Իմանա, թե ինչպիսի ֆինանսական գործիքներ գոյություն ունեն, որոնք կարող են հեշտացնել եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի կառավարումը և վերահսկումը (բանկային հաշիվ և վճարային քարտ):	ապահովագրություն): ✓ Իմանա ապահովագրական ծառայությունների տեսակները և առանձնահատկությունները:
	Հմտություն	✓ Կարողանա տարբերել կարիքը ցանկությունից: ✓ Կարողանա տարբերել կարճաժամկետ և երկարաժամկետ կարիքները: ✓ Կարողանա տարանջատել անհրաժեշտ և ավելորդ ծախսերը: ✓ Կարողանա տարբերակել «վարձու աշխատող» (օր.՝ հաշվապահ) և «ինքնազբաղ» (օր.՝ գյուղացի) հասկացությունները:	✓ Կարողանա կազմել պարզ բյուջե: ✓ Կարողանա համադրել եկամուտները և ծախսերը (հաշվեկշռի գաղափար): ✓ Կարողանա ծախսերը դասակարգել ըստ առաջնահերթության: ✓ Կարողանա սեզոնային (ոչ կայուն) եկամուտները բաշխել՝ հաշվի առնելով հետագա ծախսերը: ✓ Կարողանա տարանջատել անձնական և տնային տնտեսության եկամուտները և ծախսերը:	✓ Կարողանա թվարկել եկամուտներից կատարվող հիմնական նվազեցումները (եկամտային հարկ, սոց. վճար և այլն): ✓ Կարողանա տարանջատել դրամական հոսքերը (օր.՝ վարկի ստացում, ապահովագրական փոխհատուցում) անձնական եկամուտներից (օր.՝ դրամական փոխանցում հարազատներից) և ծախսերից: ✓ Կարողանա հաշվարկել «Հասույթ», «Շահույթ»,	✓ Կարողանա, կատարել բանկային հաշվի և վճարային քարտի կշռադատված ընտրություն: ✓ Կարողանա մեկնաբանել բանկային հաշվի և վճարային քարտի քաղվածքները և բացահայտել սխալները: ✓ Կարողանա թվարկել իր անձնական ֆինանսների վրա ազդող հիմնական ռիսկերը և դասակարգել դրանք ըստ ազդեցության և իրականանալու հավանականության: ✓ Կարողանա կատարել

				«Ինքնարժեք» և «Եկամտաբերություն» ցուցանիշները: ✓ Կարողանա տարանջատել ֆինանսական փաստաթղթերի վրա նշված կարևոր տեղեկատվությունը և բացահայտի հիմնական ռիսկային կետերը:	ապահովագրական ծառայության կշռադատված ընտրություն:
	Վերաբեր.	✓ Գիտակցի, որ պետք է ունենալ եկամուտ՝ ծախսեր կատարելու համար: ✓ Գիտակցի, որ եկամուտները սահմանափակ են: ✓ Գիտակցի, որ եկամուտները պետք է ծախսել խելամտորեն:	✓ Կարևորի սեփական փողերի կառավարումը: ✓ Կարևորի կարիքների առաջնահերթությունը ցանկությունների նկատմամբ: ✓ Կարևորի բյուջետավորումն ու պլանավորումը:	✓ Կարևորի դրամական հոսքերի (եկամուտ, ծախս, ֆինանսական մուտք և ելք) վերահսկողությունը: ✓ Կարևորի դրամը կիսելու գաղափարը որպես սոցիալական պատասխանատվության բաղադրիչ: ✓ Կարևորի ֆինանսական փաստաթղթերի (ՀԴՄ, չեկ, քաղվածք և այլն) պահպանումը անձնական ֆինանսների վերլուծության և վերահսկողության նպատակով:	✓ Կարևորի բանկային հաշվի և վճարային քարտի օգտագործումը՝ անձնական ֆինանսների կառավարման համար: ✓ Կարևորի ռիսկերի կառավարումը՝ անհարկի կորուստներից խուսափելու նպատակով: ✓ Կարևորի ապահովագրական ծառայությունների օգտագործումը:
	Վարքագիծ	✓ Ընտանիքի ավագ անդամների կողմից տրամադրված գումարը ծախսի խելամտորեն:	✓ Կազմի բյուջե՝ հաշվի առնելով իր անձնական եկամուտների և ծախսերի առանձնահատկությունները: ✓ Բաշխի եկամուտները՝ հաշվի առնելով ապագա	✓ Իրականացնի դրամական հոսքերի (եկամուտ, ծախս, ֆինանսական մուտք և ելք) պլանավորում և բյուջեի վերահսկողություն՝	✓ Ունենա բանկային հաշիվ և վճարային քարտ: ✓ Հետևի իր բանկային հաշվի և վճարային քարտերի քաղվածքներին: ✓ Ցուցաբերի զգուշավոր մոտեցում ռիսկերից

			ծախսերը և դրանց առաջնահերթությունը:	կատարելով համապատասխան գրառումներ: ✓ Օգնի ընտանիքի ավագ անդամներին՝ ընտանեկան բյուջեի կազմման և վերահսկման գործում:	խուսափելու համար: ✓ Անհրաժեշտության դեպքում օգտվի ապահովագրական որևէ ծառայությունից՝ ռիսկերը կառավարելու համար:
ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	*Գիտելիք*	✓ Հասկանա, թե ինչ է «խնայելը»: ✓ Իմանա խնայողությունների դերը մարդու կյանքում և, որ խնայողություն կատարելու միջոցով կարելի է հասնել ապագա նպատակներին:	✓ Իմանա խնայողություն կատարելու կարևորությունը: ✓ Իմանա, որ կախված նպատակից խնայելու ձևերը կարող են տարբեր լինել: ✓ ✓ Իմանա, որ խնայողությունները ներդնելով կարելի է ստանալ հավելյալ եկամուտ: ✓ Ծանոթ լինի ներդրումների հետ կապված ռիսկերին:	✓ Իմանա, որ խնայողությունները և ներդրումները կարող են լինել կարճաժամկետ և երկարաժամկետ: ✓ Իմանա պարզ և բարդ տոկոս հաշվելու սկզբունքները: ✓ Իմանա, թե ինչպիսի ֆինանսական գործիքներ գոյություն ունեն, որոնց մեջ կարելի է ներդնել խնայողությունները: ✓ Իմանա, թե ինչ է ավանդը, որոնք են դրա օգուտները և հնարավոր ռիսկերը: ✓ Իմանա Հայաստանում ավանդների երաշխավորման համակարգի մասին: ✓ Իմանա, թե ինչ է տարեկան տոկոսային եկամտաբերությունը: ✓ Ըմբռնի «Եկամտաբերություն», «Ռիսկայնություն» և «Իրացվելիություն» հասկացությունները: ✓ Իմանա, թե ինչ է	✓ Իմանա, երկարաժամկետ հատվածում խնայողություններ կատարելու դերը, օգուտները և ռիսկերը: ✓ Իմանա, թե ինչպիսի ֆինանսական գործիքներ գոյություն ունեն, որոնք հնարավորություն են տալիս կատարել երկարաժամկետ խնայողություններ: ✓ Իմանա արժեթղթերի տեսակները, դրանց օգուտները և հնարավոր ռիսկերը: ✓ Իմանա, թե ինչպես է գործում կուտակային կենսաթոշակային համակարգը որպես խնայողությունների ներդրման ձև: ✓ Իմանա ՀՀ կենսաթոշակային համակարգի առանձնահատկությունները:

				«Դիվերսիֆիկացիան»:	
	Հմտություն	✓ Կարողանա տարբերել, թե որ դեպքում է անհրաժեշտ կատարել խնայողություն սպառման հաշվին: ✓ Կարողանա բացատրել խնայողություններ կատարելու կարևորությունը:	✓ Կարողանա գնահատել խնայելու օգուտները և կատարել գիտակցված ընտրություն՝ խնայե՞լ, թե՞ ծախսել:	✓ Կարողանա կիրառել պարզ և բարդ տոկոս հաշվելու իր գիտելիքները: ✓ Կարողանա կատարել ավանդի կշռադատված ընտրություն: ✓ Կարողանա գնահատել տարեկան տոկոսային եկամտաբերությունը: ✓ Ըմբռնի ռիսկի, իրացվելիության և եկամտաբերության փոխադարձ կապվածությունները (օր.՝ որքան եկամտաբերությունը ավելի բարձր է, այնքան ավելի ռիսկային է): ✓ Կարողանա գնահատել ֆինանսական գործիքները՝ ըստ եկամտաբերության, ռիսկայնության և իրացվելիության: ✓ Կարողանա կիրառել դիվերսիֆիկացիայի սկզբունքը:	✓ Ըմբռնի ռիսկի, իրացվելիության և եկամտաբերության փոխադարձ կապվածությունները երկարաժամկետ խնայողությունների դեպքում: ✓ Կարողանա կատարել արժեթղթերի ձեռքբերման կշռադատված ընտրություն: ✓ Կարողանա կառավարել իր կենսաթոշակային հաշիվը:
	Վերաբեր.	✓ Կարևորի խնայողություն կատարելը: ✓ Գիտակցի, որ մարդկանց խնայողություններ կատարելու հակումները կարող են լինել տարբեր:	✓ Հակված լինի խնայողություններ կատարելու: ✓ Կարևորի խնայողությունների հաշվին ներդրումներ կատարելը:	✓ Հակված լինի խնայողությունների հաշվին ֆինանսական համակարգում ներդրումներ կատարելու: ✓ Կարևորի ներդրումներ կատարելու դեպքում կշռադատված մոտեցում	✓ Կարևորի երկարաժամկետ խնայողությունների կատարումը:

				կիրառելը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ռիսկայնությունը, իրացվելիությունը և եկամտաբերությունը: ✓ Կարևորի ռիսկերի կառավարման համար դիվերսիֆիկացիայի սկզբունքի կիրառումը:	
	Վարքագիծ	✓ Ունենա խնայատուփ և սկսի խնայողություններ կատարել:	✓ Պարբերաբար խնայողություններ կատարի: ✓ Ունենա հստակ խնայողական նպատակներ:	✓ Կատարի ներդրումներ տարբեր ֆինանսական գործիքների մեջ՝ ելնելով դիվերսիֆիկացիայի սկզբունքներից: ✓ Ներդրումներ կատարելիս հաշվի առնի ֆինանսական գործիքի ռիսկայնությունը, իրացվելիությունը և եկամտաբերությունը:	✓ Կատարի երկարաժամկետ խնայողություններ և օգտվի համապատասխան ֆինանսական գործիքներից:
ՊԱՐՏՔԵՐ	*Գիտելիք*	✓ Հասկանա, թե ինչ է «պարտքը» և ինչու է անհրաժեշտ լինում երբեմն պարտք վերցնել: ✓ Հասկանա, որ պարտքը պետք է վճարել ժամանակին՝ կատարելով համապատասխան նվազեցումներ եկամտից:	✓ Իմանա , թե պարտքի ինչպիսի աղբյուրներ գոյություն ունեն (ֆորմալ և ոչ ֆորմալ): ✓ Իմանա, որ վարկի դիմաց հիմնականում պետք է վճարել որոշակի տոկոսավճարներ: ✓ Իմանա, որ պարտքը ժամանակին չվճարելու դեպքում կարող են առաջանալ խնդիրներ:	✓ Իմանա, թե ինչպիսի վարկատեսակներ գոյություն ունեն: ✓ Իմանա, թե ինչ են վարկի անվանական և փաստացի տոկոսադրույքները: ✓ Իմանա, թե ինչ է վարկային պատմությունը և վարկային բյուրոն:	✓ Իմանա, թե որոնք են վարկի ապահովության միջոցները: ✓ Իմանա, թե ինչպիսի իրավունքներ և պարտականություններ են առաջանում վարկային պայմանագիր ստորագրելիս: ✓ Իմանա, թե ինչ է երաշխավորությունը: ✓ Իմանա պարտքերի

					վերաֆինանսավորման սկզբունքները:
	Հմտություն	✓ Կարողանա գնահատել, թե արդյոք պարտք վերցնելու կարիք կա:	✓ Կարողանա գնահատել պարտքի օպտիմալ չափը: ✓ Կարողանա կազմել պարտքի մարման ժամանակացույց: ✓ Կարողանա գնահատել, թե պարտք վերցնելու որ աղբյուրն է առավել արդյունավետ: ✓ Կարողանա գնահատել պարտքը ուշացնելու հետ կապված ռիսկերը:	✓ Կարողանա համեմատել շուկայում առկա վարկատեսակները: ✓ Վարկ ստանալիս կարողանա կատարել կշռադատված և օպտիմալ ընտրություն:	✓ Կարողանա մեկնաբանել վարկային և երաշխավորության պայմանագրերից բխող պարտավորությունները և իրավունքները: ✓ Կարողանա գնահատել, թե արդյոք անհրաժեշտ է իրականացնել պարտքերի վերաֆինանսավորում:
	Վերաբեր.	✓ Գիտակցի, որ պարտք վերցնելը կարող է լինել օգտակար, սակայն նաև ռիսկային:	✓ Կարևորի ֆորմալ աղբյուրներից պարտք վերցնելը: ✓ Կարևորի պարտքի մարման ժամանակացույցին հետևելը:	✓ Կարևորի պարտքերը ժամանակին վճարելը:	✓ Լավ կշռադատի մինչ երաշխավոր դառնալը: ✓ Խուսափի պարտքով պարտք մարելու մոտեցումից, եթե վերաֆինանսավորման տարբերակը ավելի էժան չէ:
	Վարքագիծ	✓ Տարբեր նպատակներով ժամանակավորապես վերցրած իրերը վերադարձնի ժամանակին:	✓ Պարտք վերցնի իր հնարավորությունների չափով: ✓ Պարտքերը մարի ժամանակին:	✓ Օգտվի պարտք վերցնելու ֆորմալ աղբյուրներից:	✓ Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրի իր վարկային պատմությունը: ✓ Անհրաժեշտության դեպքում կատարի պարտքերի վերաֆինանսավորում: ✓ Ձևավորի լավ վարկային պատմություն:
ԳՆՈՒՄՆԵՐ	*Գիտելիք*	✓ Իմանա, որ ապրանքների և ծառայությունների արժեքը արտահայտվում է դրանց գնով: ✓ Իմանա, որ նույն	✓ Իմանա, որ բացի գնից գոյություն ունեն այլ չափանիշներ ևս, որոնք պետք է հաշվի առնել որևէ ապրանք կամ	✓ Իմանա, թե ինչպես են ձևավորվում ֆինանսական ծառայությունների գները: ✓ Իմանա, թե գնից բացի	✓ Իմանա, որ ֆինանսական ծառայությունների տեսակների և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն և

		ապրանքի կամ ծառայության գինը կարող է տարբերվել կախված տարբեր հանգամանքներից: ✓ Իմանա, որ գոյություն ունեն մարդկանց որոշումների վրա ազդելու տարբեր միջոցներ (օր.՝ գովազդ և այլն):	ծառայություն ձեռք բերելիս: ✓ Իմանա, թե ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու ինչ աղբյուրներ գոյություն ունեն:	ինչ այլ պայմաններ կան, որոնք էական են ֆինանսական ծառայությունները համեմատելու և ընտրություն կատարելու համար:	խորհուրդ կարելի է ստանալ մասնագիտացված կազմակերպություններից և անհատներից:
	Հմտություն	✓ Կարողանա ճիշտ վճարել ապրանքների և ծառայությունների դիմաց և ստանալ մանրը: ✓ Կարողանա գնահատել գովազդի ազդեցությունը:	✓ Կարողանա գնահատել ֆինանսական ծառայությունների վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունը: ✓ Կարողանա համեմատել ապրանքները և ծառայությունները՝ ըստ տարբեր չափանիշների:	✓ Կարողանա իրականացնել ֆինանսական ծառայությունների համեմատություն՝ ըստ տարբեր չափանիշների: ✓ Կարողանա օգտագործել էլեկտրոնային գործիքները՝ համեմատություններ իրականացնելու համար:	✓ Կարողանա հստակ ձևակերպել այն հարցրերը, որոնց մասով մասնագիտացված կազմակերպությունը կամ անհատը կարող է օգնել իրեն:
	Վերաբեր.	✓ Գիտակցի, որ ֆինանսական ծառայությունները (վարկ, ավանդ, բանկային հաշիվ և այլն) նույնպես ունեն գին (հիմնականում տոկոսադրույքի տեսքով), ինչպես օրինակ՝ հացը, շաքարավազը և այլ ապրանքները:	✓ Կարևորի ֆինանսական ծառայությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ստացումը:	✓ Կարևորի էլեկտրոնային գործիքների օգտագործումը: ✓ Կարևորի ֆինանսական ծառայությունների համեմատումը որոշում կայացնելուց առաջ:	✓ Կարևորի ֆինանսական մասնագիտական խորհրդատվության դերը: ✓ Պատրաստ լինի վճարել ֆինանսական մասնագիտական խորհրդատվության համար:
	Վարքագիծ	✓ Օգտվի առևտրի և սպասարկման կենտրոններից:	✓ Օգտվի ֆինանսական ծառայությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն տրամադրող	✓ Համեմատի ֆինանսական ծառայությունները ըստ համապատասխան չափանիշների և կատարի գիտակցված ընտրություն: ✓ Օգտվի	✓ Հարկ եղած դեպքում օգտվի ֆինանսական մասնագիտական խորհրդատվությունից:

			աղբյուրներից: ✓ Կատարի գիտակցված գնումներ՝ համեմատելով ապրանքները և ծառայությունները: ✓ Խուսափի իմպուլսիվ գնումներ կատարելուց:	համապատասխան էլեկտրոնային գործիքներից:	
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	*Գիտելիք*	✓ Իմանա, որ մարդիկ որպես քաղաքացիներ ունեն որոշակի իրավունքներ և պարտականություններ:	✓ Ծանոթ լինի ֆինանսական հատվածին բնորոշ հիմնական տերմինները:	✓ Իմանա, որ ֆինանսական ծառայություններից օգտվելիս առաջանում են որոշակի իրավունքներ և պարտականություններ: ✓ Իմանա, թե ինչպիսի իրավական դաշտ գոյություն ունի, որը կարգավորում է ֆինանսական հատվածը: ✓ Իմանա, որ իրենց իրավունքն է բարձրաձայնել դժգոհությունները որևէ ֆինանսական ծառայությունից օգտվելիս:	✓ Իմանա իրավունքների պաշտպանության պաշտոնական / իրավական ուղիները և դրանց դերը: ✓ Իմանա Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին:
	Հմտություն	✓ Կարողանա, ըստ անհրաժեշտության, պաշտպանել իր իրավունքները:	✓ Կարողանա բացատրել թե ինչպես է կարգավորվում ֆինանսական հատվածը: ✓ Կարողանա բացատրել ֆինանսական հատվածին բնորոշ հիմնական տերմինների նշանակությունը:	✓ Կարողանա տարանջատել սեփական իրավունքները և պարտականությունները ֆինանսական կառույցի իրավունքներից և պարտականություններից: ✓ Կարողանա դիմում գրել:	✓ Իրավունքների խախտման դեպքում կարողանա նույնականացնել, թե ուր պետք է դիմել:
	Վերաբեր.	✓ Հարգի ուրիշները իրավունքները: ✓ Պատասխանատվությամբ վերաբերվի իր	✓ Կարևորի սեփական իրավունքների պաշտպանությունը ֆինանսական	✓ Գիտակցի իր և ֆինանսական կառույցի կամ կազմակերպության	✓ Իրավունքների պաշտպանության հարցում կարևորի պաշտոնական /

		պարտականություններին:	հատվածում:	դերերը իր սեփական իրավունքների պաշտպանության գործում: ✓ Կարևորի պաշտոնական գրավոր հարաբերությունների դերը:	իրավական ուղիները: ✓ Կարևորի Ֆինանսական համակարգի հաշտարարի դերը:
	Վարքագիծ	✓ Օգտվի իր իրավունքներից և պատշաճ կատարի իր պարտականությունները:	✓ Անհրաժեշտության դեպքում ձեռնարկի քայլեր սեփական իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:	✓ Ցանկացած պայմանագիր ստորագրելուց առաջ կարդա և ըմբռնի դրա ամբողջ բովանդակությունը: ✓ Անհրաժեշտության դեպքում դիմի ֆինանսական կազմակերպության աշխատակցին՝ պայմանագրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:	✓ Ֆինանսական հաստատության հետ վեճ ունենալիս առաջնորդվի պաշտոնական / իրավական ուղիներով:
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	*Գիտելիք*	✓ Իմանա, թե ինչ անձնական փաստաթղթեր կան և ինչ նշանակություն ունեն:	✓ Իմանա, թե անձնական որ տվյալները պետք չէ բացահայտել այլ մարդկանց: ✓ Իմանա անձնական տվյալների բացահայտման հետ կապված ռիսկերը:	✓ Իմանա, որ պետք է զգույշ լինել անձնական ֆինանսները որևէ մեկի հետ քննարկելիս: ✓ Իմանա, որ գոյություն ունեն ֆինանսական զեղծարարություններ և խարդախություններ:	✓ Իմանա ֆինանսական զեղծարարության և խարդախության հիմնական ձևերը և տեսակները: ✓ Իմանա, թե ինչպես պետք է խուսափել ֆինանսական զեղծարարություններից և խարդախություններից: ✓ Իմանա ինչ պետք է անել, եթե դարձել է ֆինանսական զեղծարարությունների կամ խարդախությունների զոհ:
	Հմտություն	✓ Կարողանա տարբերակել	✓ Կարողանա դասակարգել	✓ Կարողանա գնահատել	✓ Կարողանա բացահայտել

		անձնական փաստաթղթերը:	տեղեկատվությունը՝ ըստ գաղտնիության:	ֆինանսական ծառայությունները (այդ թվում՝ էլեկտրոնային գնումներ կատարելու միջոցները)՝ ըստ ապահովության:	ֆինանսական զեղծարարության և խարդախության փորձը:
	Վերաբեր.		✓ Կարևորի անձնական տեղեկատվության գաղտնիությունը:	✓ Ֆինանսական ծառայություններից օգտվելիս ուշադրություն դարձնի անձնական տվյալների գաղտնիության ապահովմանը:	✓ Կարևորի ֆինանսական զեղծարարության կամ խարդախության մասին տեղեկացված լինելը:
	Վարքագիծ		✓ Ըստ անհրաժեշտության տրամադրի կամ օգտագործի իր և ընտանիքի վերաբերյալ անձնական տեղեկատվությունը:	✓ Քայլեր ձեռնարկի անձնական տեղեկատվության գաղտնիության ապահովման ուղղությամբ:	✓ Ուշադրություն դարձնի ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների վերաբերյալ տեղեկատվությանը: ✓ Քայլեր ձեռնարկի ֆինանսական զեղծարարությունների և խարդախությունների զոհ չդառնալու ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bank Negara Malaysia. (2015). *Financial Literacy Standards for Malaysian schools*.
2. National Council of Financial Supervisors. (2013). *Core competencies for Financial Education in Kindergarten, Basic Education, Secondary Education and Adult Learning and Training*. Portugal: Ministry of Education and Science.
3. OECD. (2015). *OECD/INFE core competencies framework on financial literacy for youth*.
4. Personal Finance Education Group. (2013). *Financial Education Planning Framework (11-19 years)*. UK: pfeg.
5. Personal Finance Education Group. (2013). *Financial Education Planning Framework (3-11 years)*. UK: pfeg.
6. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով. (2014). *Հայաստանի Հանրապետության ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն*. Երևան.
7. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով. (2014). *Ֆինանսական կոմպետենցիաների մատրիցը մեծահասակների համար*. Երևան.